«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ՝

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ

25. 12. 2023

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԽԱՉԱՏՐՅԱՆ ԱՆԻ ՌՈՒԲԻԿԻ «ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ ՇԱՐԺԸՆԹԱՑԸ ԿԱՌԱՎԱՐՉԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ»

«ԺԹ.00.01-ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ, ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ և ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ, ԱՆՁԻ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Մարդկային զարգացման ներկա փուլում, երբ առկա են սոցիալ-տնտեսական տարաբնույթ գործընթացներ, տնտեսական ճգնաժամեր և վերջիններիս արդյունքում ֆինանսական կապիտալիզացիայի մակարդակի նվազում, սնանկացում էապես փոփոխության հրամայական է դառնում կառավարչի անձին և կառավարման գործընթացի մասնակիցների մասնագիտական զարգացումը: Ըստ այդմ՝ այսօր, առավել քան երբևէ, առաջնային է դառնում կառավարչական գործունեության առանձնահատկությունների և կառավարչի հոգեբանական որակների մասնագիտական համապատասխանության հիմնախնդիրը: Նշյալ

ոլորտում մասնագիտական կարևոր հոգեբանական առանձնահատկությունների, որակների, ունակությունների ու կարողությունների դրսևորումների և շարժընթացի վերաբերյալ հետազոտությունների սակավությամբ ու առկա հիմնախնդիրների կնճռոտ կողմերի ստվերում մնալու փաստն է, որ պայմանավորում է սույն ատենախոսության արդիականությունն ու հրատապությունը:

Միանշանակ է, որ այս համատեքստում մասնագիտական կարևոր անձնային որակների զարգացման համար նպաստավոր պայմանների ձևավորումն ու վերջիններիս հավուր պատշաճի զարգացումը, այսօր հրամայական պահանջ է, ինչը հնարավորություն կմձեռի առավել արագ ապահովել կառավարչական գործունեության համատեքստում մասնագիտական և անձնային որակների որակների շարժընթացը: Թեպետ այս ոլորտում առկա են բազմաթիվ հետազոտություններ, այնուամենայնիվ դեռ շատ ու շատ հարցեր կարոտ են լուսաբանման ու նորովի մեկնաբանման:

Սույն ատենախոսությունը իր հետազոտությամբ նոր մոտեցում է հիմնախնդրին՝ և նրա վերջնարդյունքները կարող են հիմք դառնալ կառավարիչների պատրաստման ու վերապատրաստման, այդ ոլորտում նոր հայեցակարգային դրույթների մշակման ու կիրարկման համար: Նպատակադրվելով ուսումնասիրել կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների շարժընթացն ապահովող գործոնները և դրանց հարաբերակցությունը՝ ատենախոսը կենտրոնացել է հստակ և հաջողություն ապահովող խնդիրների վրա, քայլ առ քայլ իրագործել իր առջև դրված նպատակը: Նոր խոսք ու նոր գաղափարական հենք է առաջադրված գիտական կանխադրույթը առ այն, որ կառավարչների մասնագիտական զարգացումն ապահովող հոգեբանական որակների շարժընթացը պայմանավորված է դրանց յուրահատուկ համադրությամբ, այն է՝ հուզական ինտելեկտ, մտածողություն, կամային ինքնակարգավորում, սոցիալ-հաղորդակցական կոմպետենցիա:

Հոտազոտության օբյեկտն ու առարկան ձևակերպված են հստակ: Իբրև հետազոտության տեսամեթոդական հիմք՝ ատենախոսը հենվել է ծանրակշիռ գիտական հենքի՝ ի դեմս կառավարչի անձնային առանձնահատկությունների հայեցակարգերի (Յու. Վ. Սինյագին, Ֆ. Ֆիդլեր, Վ. Մ. Շեպել, Մ. Շոու, Մ. Վուդկոկ, Դ. Ֆրենսիս, Վ. Ա. Բոդրով ու Ե. Ա. Կլիմով), ինչպես նաև մասնագետի անձնային որակների զարգացման մոտեցումների (Վ. Շեդրիկով, Վ. Կուդրյավցեվ, Կ. Աբդուլխանովա-Սլավսկայա, Յու. Պովորենկով և այլոք):

Սույն հետազոտությունը, ըստ էության նորովի մոտեցում է հիմնախնդրին, հաշվի առնելով, որ վերլուծվել և համակարգված կերպով ներկայացվել են կառավարչի մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակները, մասնագիտական զարգացման գործընթացում այդ որակների շարժընթացը: Ատենախոսի կողմից առանձնացվել են մասնագիտական գործունեության համար կարևոր անձնային որակների համախմբերը և դրանց փոխկապվածությունները, որոնց զարգացումը կարող է իրականացվել կառավարիչների պատրաստման կրթական ծրագրերում հոգեբանական բաղադրիչի ներառմամբ: Առաջադրվել են մասնագիտական պատրաստման գործընթացում մասնագետի անձնային որակների զարգացման հայեցակարգային դրույթները:

Հնգափուլ ստորակարգությամբ և տևական ժամանակահատվածում իրականացված ծավալուն հետազոտության նպատակով ընդգրկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարչական տարբեր մասնագիտությունների 300 մագիստրանտներ, իբրև փորձագետ հանդես են եկել պետական կառավարչական պաշտոնում տաս և ավել տարվա փորձ ունեցող 50 կառավարիչներ:

Կառավարչական՝ իբրև մասնագիտական գործունեության համար մասնագիտական կարևոր անձնային որակների բացահայտման հնպատակով ատենախոսի կողմից կիրառվել է կառավարչական որակները գնահատող մեթոդիկաների Ն. Հոլլի «EQ թեստ, սոցիալ-հաղորդակցական

կոմպետենտության թեստ, Ա. Գ. Զվերկովի և Ե. Վ. Էյդմանի «Կամային ինքնակարգավորման հետազոտման մեթոդիկա», Ջ. Բրուների «Մտածողության տիպը և կրեատիվության մակարդակը չափող հարցարան», մասնագիտական կրթական ծրագրերի հոգեբանական բաղադրիչների հետազոտության հարցարան, փորձագիտական հարցում:

Հետազոտությունից ստացված արդյունքները ենթարկվել են որակական և քանակական վերլուծության: Իրականացված վերլուծության արդյունքները և բացահայտված կոռելյացիոն կապերը կարող են կիրառություն գտնել մասնագիտական կրթության գործընթացում կառավարիչների մասնագիտական գործունեության համար կարևոր հոգեբանական որակների զարգացմանն ուղղված աշխատանքների կազմակերպման և իրականացման համար:

Առկա են փաստացի արձանագրումներ առ այն, որ հետազոտության արդյունքները քննարկվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի կառավարման հոգեբանության ամբիոնում, ԵՊՀ ընդհանուր հոգեբանության ամբիոնի նիստերում, «Կառավարչական գործունեության հոգեբանություն» գիտահետազոտական լաբորատորիայում, ՀՀ և միջազգային բազմաթիվ գիտաժողովներում, սեմինար-քննարկումներում:

Աշխատանքի հիմնական արդյունքները ներկայացված են տասը գիտական հոդվածներում: Սույն ատենախոսությունը ավարտուն և ամբողջական աշխատանք է: Ատենախոսության գլուխներն ու ենթագլուխները կապված են միմյանց փոխլրացնող ու տրամաբանական կապով:

Այնուամենայնիվ, ատենախոսության մեջ առկա են թերություններ: Մասնավորապես՝

1. Ատենախոսության թեմայի առանցքային եզրույթը շարժընթացն է, սակայն այդ եզրույթն ամբողջ աշխատանքում հանդիպում է ընդամենը 23 անգամ, որից 19-ը՝ ներածության մեջ և վերնագրերում: Ատենախոսության տեսական գլխում այն գրեթե չի բնութագրվում: Ավելին, նշված եզրույթի

վերաբերյալ հատվածաբար հանդիպող անդրադարձները փոխկապակցված չեն: Օրինակ, պաշտպանությանը ներկայացվող դրույթներում շարժընթացը «դրսևորվում է հաղորդակցման բանիմացության, հուզական ինտելեկտի, մտածողության ցուցանիշներում:» Սակայն էջ 107-ում նշվում է, որ «Մասնագիտական պատրաստման գործընթացում կառավարչական որակների շարժընթացի առանձնահատկություններից է դրանց փոփոխությունների քիչ ենթարկվելը:» Ուստի, մեկնաբանության կարիք ունի հաղորդակցման բանիմացության, մտածողության ցուցանիշների՝ որպես շարժընթացի, և դրանց փոփոխությունների քիչ ենթարկվելու մասին ատենախոսի պնդումները:

2. Ներածության մեջ «Հետազոտության մեթոդները և մեթոդիկաները» բաժնում ներկայացված չէ որևէ մեթոդիկա:
3. Գլուխ 2.2-ում նշվում է, որ հաղորդակցման «առանձնահատկությունները բացահայտելու համար նպատակահարմար է կիրառել Ե. Ի. Ռոգովի սոցիալ-հաղորդակցական կոմպետենտության գնահատման մեթոդիկան:» Ինչպես նաև՝ «կառավարչական հմտությունների ձևավորվածության մակարդակի գնահատման գործընթացում նպատակահարմար է կիրառել Ա. Գ. Զվերկովի և Ե. Վ. Էյդմանի կողմից մշակված կամային ինքնակարգավորման հետազոտման մեթոդիկան:» Ուստի, ատենախոսության մեջ բացակայում է նշված մեթոդիկաների ընտրության նպատակահարմարության հիմնավորումը:
4. Փորձագիտական հարցման արդյունքները խիստ նկարագրական են և զուրկ մանրամասներից:
5. Վիճակագրական վերլուծությունը թերի է ներկայացված՝ մանրամասնված չեն կախյալ խմբերը, բացակայում են շատ կարևոր տվյալներ, որոնք կարելի է դուրս բերել վիճակագրական SPSS ծրագրի միջոցով, օրինակ, հաշվարկված չէ նորմալ բաշխումը, պարզ չէ, թե

համահարաբերակցական վերլուծության վիճակագրական ո՞ր մոտեցումն է կիրառվել, և այլն:

6. Եզրակացությունները անուղղակի կերպով են անդրադառնում գիտական վարկածին: Պարզ չէ, վարկածը հաջողվեց ապացուցել ատենախոսին, թե ոչ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով թեմայի այժմեականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, Անի Ռուբիկի Խաչատրյանի «Անձի հոգեբանական որակների շարժընթացը կառավարչի մասնագիտական զարգացման գործընթացում» «ԺԹ.00.01-Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությանը համարել ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան, այսինքն՝ «ԺԹ.00.01-Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, իսկ Անի Ռուբիկի Խաչատրյանին շնորհել հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքը և եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի 22. դեկտեմբերի, 2023թ .12/23 նիստում:

Քննարկմանը մասնակցել են ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մարիաննա Ավետիսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Անժելիկա Այվազյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Ֆիրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Մուրադյանը, դասախոս Լիլիթ Խաչատրյանը:

ԱՄԲԻՈՆԻ ՎԱՐԻՉ՝ Ն. ՀԱԿՈԲՅԱՆ

Ամբիոնի վարիչ Նաիրա Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ՝

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Մ. ՍԱՐԳՍՅԱՆ